

ԽՆԴԻՐՆԵՐ, ԲԱՐՁՐԱՅՐԱԾ ՀԱՐՑԵՐ

1. 2013թ Մայիսի 12-ին համայնքի վարչական տարածքում տեղացած կարկտի հետևանքով գյուղատնտեսական տնտեսություններին պատճառած վնասների և կառավարություն կողմից ձեռնարկված միջոցառումների և առկա խնդիրների մասին:
2. Գյուղատնտեսական մթերքների /լուլիլի, բանջարաբոստանային կուլտուրաներ և այլն/ ցածր գնային քաղաքականությունները /իրացման դժվարությունները/:
3. Բնակիչների հողատեսքերի ամբերիության հարցը:
4. Համայնքի ներտնտեսային ճանապարհների բարեկարգման հարցը:
5. Գազի վարձավճարների և հոսանքի վարձավճարների հետ կապված հարցը:

01.01.2013-30.06.2013թթ-ի ընթացքում Հայթաղ համայնքի գյուղապետարանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները

1. Ճշգրտվել է Հայթաղ համայնքի հողի հարկի և գույքահարկի ապառքները և բնակիչներին տրվել են ծանուցագրեր:
2. 2013թ-ի հունվարի 18-ի և 20-ին, փետրվարի 4-ին և 24-ին Հայթաղ համայնքի գյուղատնտեսության խորհրդատվական կենտրոնում մշակվել են գյուղատնտեսության գարնանային աշխատանքների նախապատրաստական աշխատանքները:
3. Գյուղապետարանի աջակցությամբ 2013թ-ի մարտ և մայիս ամսվա ընթացքում մաքրվել են փակ դրենաժային համակարգը 200 և 750մ բաց դրենաժային համակարգը, որը չաշխատելու հետևանքով վնաս էր հասցնում ազգաբնակչությանը:
4. 01.01.2013թ-30.06.2013թթթրությամբ համայնքի ազգաբնակչության կողմից ստացվել է 64բողոքներ , որից բավարարվել է 58-ը: Բողոքները հիմնականում վերաբերվում են բնակչության սոցիալ-տնտեսական վիճակին, բուժսպասարկման հետ կապված խնդիրներին, սեփականաշնորհված հողերի անբերրիությանը, հոսանքների և խմելու ջրի հետ կապված խնդիրներին:
5. Զինկոմիսարիատիի հետ համատեղ կազմակերպվել է գարնանային զորակոչային աշխատանքները և դոսաֆում սովորող ուսանողների ճանապարհային ծախսերը հոգացել է գյուղապետարանը /2 ուսանողներ/:
6. Հայթաղի ազգաբնակչությանը աջակցել ենք ձեռք բերելու 66տ ամոնյական սիլիտրա պարատանյութ 6000դ. առժողությամբ և դիզ վառելիք 1լիտրը 350դրամ /ՀՀ կառավարության/ աջակցությամբ:
7. Մարտ-ապրիլ ամսվա ընթացքում գյուղապետարանի և ազգաբնակչության համատեղ ուժերով կատարվել է աղբահանություն համայնքի փողոցները մշակույթի տան հուշայունների տարածքները, մանկապարտեզի տարածքը մաքրվել են խոտից: Համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցը մաքրվել է մոտ 11000մ:
8. 2013թ-ի մարտ և մայիս ամսվա ընթացքում գյուղապետարանի օժանդակությամբ և համայնքի բնակիչների օժանդակությամբ դպրոցի աջակցությամբ մաքրվել է դպրոցի տարածքը:

9. 2013թ-ի մայիս ամսին բարեկարգման աշխատանքներ են կատարվել հուշայուների համալիրի տարածքում, տնկվել են 300 վարդեր և 100 բարդու տնկիներ:
10. գյուղապետարանի օժանդակությամբ խրախուսվել են սպորտային միջոցառումները: /կինգ-բոքսինգ, ծանրամարտ, Ֆուտբոլ/ Պարզևատրվել են 1-3 տեղերը գրաված մարզիկները:
11. Ապրիլի 5-ին գոհված ազատամարտիկ Հրայր Կարապետյանի մահվան 16-րդ տարելիցը նշվեց դպրոցի հետ համատեղ և ծաղիկներ դրվեցին հուշարձանին:
12. Մայիսի 9-ին նշվեց հայրենական պատերազմի 63-րդ տարելիցը և գյուղապետարանի կողմից Հայրենական պատերազմի մասնակիցները պարզևատրվեցին և դրամական օգնություն ստացան:
13. Ազգաբնակչությանը գյուղապետարանը օգնել է ձեռք բերելու անհրաժեշտ բույսերի սերմացուներ, վարունգ, լուլի, ձմերուկ սեխ սոխ և այլն:
14. Ազգաբնակչությանը տրվել են ծանուցագրեր ժամանակին հարկային պարտականությունները կատարելու համար:
15. Մայիսի 12-ին կարկուտից տուժած ընտանիքներին օգնելու և ցանքատարածքներն ճշտելու հետ ստեղծվել է հանձնաժողով, վնասների չափը ճշտելու և տուժած ընտանիքներին օգնելու համար:
16. Հունիսին ավարտվել է ցորենի բերքահավաքի հետ կապված աշխատանքները և 3 կոմբայնների հետ պայմանավորվածություն ձեռք բերվել ժամանակին բերքահավաքը կազմակերպվելու համար:
17. 2013թ-ին մայիս ամսին գյուղապետարանի կողմից կազմակերպվել են դասընթացներ աշխատակիցների և ազգաբնակչության համար գյուղատնտեսության վերաբերյալ, գյուղատնտեսության վարկավորման վերաբերյալ ծրագրեր մշակելու ուղղությամբ:
18. 2013 հունիս ամսին Հայթաղի գյուղապետարանի կողմից լրացուցիչ մաքրվել են բոլոր ներտնտեսային առուների խցանված հատվածները: Մաքրվել և բարեկարգվել է դպրոցի, հայրենական և արցախյան զոհերի հիշատակին կառուցված հուշարձանների տարածքը:
19. 2013թ-ի մայիս և հունիս ամսվա ընթացքում բարեկարգվել է 6 դաշտամիջյան ճանապարհներ:

20. 2012թ-ի մարտ ամսվա ընթացքում գյուղապետարանի կողմից մաքրվել է դպրոցի և մանկապարտեզի տարածքը :
21. 24.01.2013-30.06.2013թթ ընթացքում Հայթաղի գյուղապետարանի կողմից դպրոցի աշակերտների և նախակրթարանի աշակերտներին տրամադրվել է 14 անվճար ավտոբուսներ ք. Երևան, ք. Ծաղկաձոր, ք Ղիլիջան, ք Վանաձոր, ք Աղվերան, գ. Օշական, գ. Սարդարապատ այցելելու և մշակույթային միջոցառումներին մասնակցելու համար:
22. 2013թ-ի ապրիլ-մայիս ամիսներին տարվել են աշխատանքներ ազգաբնակչության հոսանքի անխափան աշխատանքները ապահովելու համար, Կտրվել են ճանապարհների հոսանքի լարերի խանգարող բոլոր ծառերի ճյուղերը կամ ծառերը:
23. 2013թ-ի ապրիլ ամսին գյուղապետարանի և ազգաբնակչության ուժերով մաքրվել է Սայաթ-Նովա փողոցում գործող կոյուղու 70մ հատվածը:
24. Գյուղապետարանի և խմելու ջրի էջմիածնի գրասենյակի հետ համատեղ տարվել են աշխատանքներ գյուղը անխափան խմելու ջրով ապահովելու համար:
25. 2013թ-ի փետրվար ամսին գյուղապետարանի և էլեկտրոցանցի հետ համատեղ տարվել են աշխատանքներ համայնքի փողոցների լուսավորումները և մշակույթի տան շրջակայքի լուսավորումը կարգավորելու կապակցությամբ: Փոխվել և վերանորոգվել են 120 լուսային սարքեր:
26. Հայթաղ համայնքում մահացած 11 բնակիչների ընտանիքներին հատկացվել է ֆինանսական օգնություն:
27. 2013թ-ի ապրիլ, մայիս հունիս ամիսների ընթացքում բարեկարգվել է Հայթաղ համայնքի Չարենցի, Բակունցի 100մ Ծ.Իսակովի 200մ, Պ. Սևակի 300մ փողոցները:
28. 2013թ-ի մայիս ամսին նախակրթական դասարանների համար դպրոցի տարածքում կատարվել է բարեկարգման աշխատանքներ:
29. Անցկացվել է համայնքի ավագանու 4 նիստ, որտեղ քննքրկվել են համայնքի խնդիրներին, բնակիչների սոցիալ տնտեսական իրավիճակին վերաբերվող հարցեր և որոշումներ փակցվել են գյուղապետարանի շենքում ցուցավահանակում` համայնքի բնակիչների համար տեսանելի տեղում:
30. Համայնքում սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ կատարվում է աղբահավաք:

31. 2013թ-ի հունիսի 1-ին կազմակերպվել է երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում և նախակրթարանի I-IV դասարանների երեխաներին տրամադրվել է ավտոբուսներ, Օշական, մեկնելու համար:
32. Հաշվետու ժամանակահատվածում գյուղապետարանի կողմից աջակցություն է ցուցաբերվել քաղաքապանության մարմիններին, ռադիված երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:
33. Հաշվետու ժամանակահատվածում պատշաճ կազմակերպվել է գերեզմանատների գոծունեությունը և դրանց պահպանման աշխատանքները:
34. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը
35. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է հսկողություն առևտրի ոլորտի ծառայողների շրջանում:
36. Հունիսի 19-ին բուժաշխատողների օրվա առթիվ կազմակերպվել է հյուրասիրություն համայնքի բժշկական ամբուլատորիայում:
37. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն՝ հակահամաճարակային միջոցառումներ:
38. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 21 որոշում և արձակվել է 5 կարգադրություն՝ համայնքի բնակիչների հողամասի գործառական նշանակություն փոխելու, հասցեավորման, ինքնական կառուցված օժանդակ կառույցը օրինականացնելու և համայնքային ծառայության թափուր պաշտոն գրադացնելու հետ:
39. Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ամենօրյա օգնությամբ, համագործակցությամբ իրականացվել են միջնակարգ դպրոցի, բուժ. ամբուլատորիայի արդյունավետ գործունեությունը:
40. Հաշվետու ժամանակահատվածում բնակիչների դիմումով կատարվել է 4 հողի չափագրում և սահմանների ճշտում, կատարվել են հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման աշխատանքներ:
41. Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները շարունակվում են:

42. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և անց է կացվել հինգ հանդիպումներ ազգաբնակչության և վարկավորող կազմակերպությունների հետ:
43. 2013թ-ի հունվար ամսին գյուղապետարանի կողմից ֆինանսավորել է համայնքի միջնակարգ դպրոցի բաստկեբոլի դաշտի կառուցումը:
44. 2013թ-ին մայիս ամսին գյուղապետարանի օժանդակությամբ վերանորոգվել են մշակույթի տան պատուհանները 30քմ:
45. Հայթաղի գյուղապետարանի աջակցությամբ ապրիլ-մայիս ամսին շարունակվել են կաբելային ինտերնետ ցանցի կառուցման աշխատանքները գյուղապետարանի և բնակիչների համար: